

# В УЧЕБНОМ РЕЖИМЕ

F U N D A M E N T A L

ՕՐԵՆՎԻՑՑԱՐԱՐԵՐԱՆ ՀԵՐԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՀԵՅՈՑ ԿԱՇՎԻ ՀԱՄՐԵ.

$$\left( \tilde{G}, \text{exp}(\alpha \tilde{\omega}_0) \tilde{G} \right)$$

P.

Դասանալով զեպի պարանակութիւնը  
աքաղաքական Օրէնսդիմութեան նշա-  
նակութեանը չոյց կեանքի համար, և ս-  
հարկաւոր եմ համարում զգուշացնել  
իմ ընթերցողներին, որ այդ վերնագիրը  
չայ նոցա առիթ որոնել զբածիս մէջ  
լայնատարած, ընդարձակ վիլֆուփական  
ու վարչութեան: Խոկ այդ վերնագիրը, կարծում  
եմ ես, պիտի ցոյց տայ հարկաւորութիւն  
համեմատել միայն Օրէնսդիմութեան  
արշեսանների պահանջանջողութիւնները մեր  
կեանքի պիտոյքների հետ: Աւրեմն մեր  
շրջանը այս աեղ պիտի լինի աւելի նեղ,  
քան թէ այն ժամանակ, երբ մենք վերո-  
յիշեալ հարցը վճռելներ իրրե մի ընդհա-  
նուր արշեսական, բարոյական, կամ քա-  
ղաքական խողիր: Եւ յդպիսի կերպի սահ-  
մանափակելով հարցը, և ընդունելով  
վերջինն իրրե համեմատութիւն օրէնսդի-  
մութեան արշեսական սկզբներին չ-  
այց կեանքի պիտոյքներին, մենք կար-  
ծում ենք որ անվիճելի է, որ եթէ ես զի-  
տեմ, թէ այս ինչ քան արդելուած է  
քաղաքական կամ քրէական օրէնքնելով,  
և այդ քան զործելի ենթարկում է, զոր-  
ծողին այս ինչ պատժի և տուգանքի ներ-  
քոյ, ես այն քանը չեմ զործի, և ընդ հա-  
կառակն, եթէ ես զիտեմ, որ միայն այս ինչ

ընդունուած ձեզ սեպհականութիւն  
ձեռք բերելն մնում է ինչ իրեւ մի ան-  
քականելի իրաւունք ազգի ազգ և որդւոց  
որդի, և ուրիշ ձեւրավ սեպհականու-  
թիւն ձեռք բերելն արդելուած է օրեն-  
քով և մեր ստորաւթիւններով, ևս կաշ-  
խաւում իրաւունք ձեռք բերել ոյդ ըն-  
դունուած ձեւրի Տանապարհներով մի-  
այն: Աւելացր պիտի համարուի այժմեան  
ժամանակում քարոզել այն Ճշմարաս-  
թիւնը, որ իրաւագիան թիւնը (քրօնական)՝  
բարոյական կերպիւ կրթում է մարդին, մաքրում է նորա հողին և սիրու  
մլաւոր և պատուիրանազանց (պրեստու-  
նայի) զբացմունքներից: Խնապէս սկզբնա-  
կան երեխայական կրթութիւնը նախա-  
պատրաստում է երեխային ապագայում  
արժանի քաղաքացի, որդի ազգի և Առ-  
կեղեցւոյ, նոյնպէս ազգային կրթութիւ-  
նը՝ իւր բարոյական ուղղաւորութեան  
համար պահանջում է, եթէ կարելի է  
այսպէս ասել, իրաւաբանական կրթու-  
թիւն: Այդ ազգային իրաւաբանական  
կրթութիւնը չիպիսի հասկացվի, այնպէս  
թէ ամեն մի ազգի անգամին, անհատին,  
անշուշտ հարկաւոր է ստանալ այդ մա-  
սին բարձր ուսումն: Այդպիսի պահան-  
ջողաւթիւն կլիներ մինչև տնտեսմ անկա-  
տարելի: Ազգային կրթութեան նշանա-  
կութիւնը պիտի ընդունուի տարածու-  
մըն մի խումբի, կամ ազգի մեջ՝ ընդհա-  
նուր հասկացողութիւնն անհաների իրա-  
ւանց յարաքերութեանց մասին: Կեանքը  
և նորա սահմանադրութիւնները ստա-  
նում են նշանակութիւն գուռը բաց ու-  
սումնաբանների, որտեղ մարդիք կարող են  
առանց արգելքի մասել և ուսանել իւր

և բորսյական և բորսյական իրաւունքները։ Եյդպիսի նշանակութիւն տալիս է երեւլի Տօկվելը քաղաքական սահմանադրութիւններին։ Եյդպիսի ուսումնականի բառը վկայութեան մի և նոյն ուսումնականի, ցանում է ազգի մեջ սերմ քաղաքականութիւն և բարոյականութիւն։ Ի հաստատութիւն այդ կարծիքին՝ դառնամք դեպի մարդկային պատմութիւնը։ Եյտ տեղից մենք տեսնում ենք մի ընդհանուր յայտնութիւն, որ միայն այն ազգը լինում է զօրեղ իւր ներքին և արտաքին կեանքումը, երբ նա ձիշդ կրթուած է լինում քաղաքական կերպիւ, երբ նա պատվում է ուրիշի իրաւունքը, և երբ մաքուր և խղճատանքով է լինում նորայարաբերութիւնները դեպի ուրիշն։ Ուղիղ հասկացողութիւն, մեր կարծիքով, այն պիտի համարուի, որ Հռովմայեցւոց տէրութեան զօրեղութիւնը և համաշխարհական նշանակութիւնը՝ ունի հիմն վերոյիշեալ կերպիւ քաղաքական կրթութիւնը։ Հռովմ, ըստ վկայութեան Իշերինդի, երրապատիկ կանոններ գրեց մարդկութեան համար՝ օրինական քաղաքական և կրօնական, և այդ օրինագիտութիւնները մինչև այսօր ծառայում են ամբողջ Կւրոպայի կանոնների կարծիքը, եթէ նոքա այդ յայտնութիւնը կվերագրեն նոցա իրողական ուժին, նոցա պատերազմներին, անթիւ զօրքերին և յաղթութիւններին։ Օրէնքը, իրեւ տրական կանոն, է մեր ձգտողութիւնների սահմանն, է մեկնութիւն մեր ներքին համոզմունքների, կնշանակէ, օրէնքը միայն այն ժամանակը կունենայ աղատ իրողութիւն և կլինի երկարաւե, և այն ժամանակը կձգէ արմատ մի

ների և բահանականների։ Քաղաքական յարաբերութեանց Հռովմական անուանակացութիւննքը, որոնք ընդունուած են արեւելեան Կւրոպայումը, նոցա Հռովմէական մեկնութեան բաւականին ապացոյց է այն միտքին, թէ Ֆլարիո, Հռովմ գրեց համաշխարհական քաղաքական օրէնքներ։ Հասկանալի է, որ օտար ազգեր, ընդունելով Հռովմայեցւոց մեջ մշակուած ընդհանուր սկիզբներն, և վերաբերելով իւրեանց կարքին, կամ վերաբերում էին նորանց ամբողջապէս, կամ թէ ձևափոխելով ըստ պիտոյքի, ըստ հանգամանաց իւրեանց կեանքի։ Եյդ է պատճառը, որ այժմ ամբողջ Կւրոպայի իրաւաբանական ուսումնարաններումը Հռովմայեցւոց կանոնադրութիւնները ուսուցանում են իրեւ զլիաւոր և հիմնական առարկայ ազգային օրէնսդիրութեան։ Եյդպիսի կերպիւ արդարութիւն կայ այն ասացուածի մեջ, թէ այժմն է Հռովմ կենդանի է, չէ մեռած։ Հետաքրքրական է, իմ կարծիքով, պարզել՝ թէ ինչ էր արդեօք այն պատճառը, որ տարածեց օտար ազգերի մեջ Հռովմայեցւոց ազդեցութիւնը, իշխանութիւնը և նոցա կանոնները։ Կամաւալ եմ համարում ոյն պատմարանների և իրաւաբանների կարծիքը, եթէ նոքա այդ յայտնութիւնը կվերագրեն նոցա իրողական ուժին, նոցա պատերազմներին, անթիւ զօրքերին և յաղթութիւններին։ Օրէնքը, իրեւ տրական կանոն, է մեր ձգտողութիւնների սահմանն, է մեկնութիւն մեր ներքին համոզմունքների, կնշանակէ, օրէնքը միայն այն ժամանակը կունենայ աղատ իրողութիւն և կլինի երկարաւե, և այն ժամանակը կձգէ արմատ մի

որ և իցէ բնաւորութեան, կեանքի մէջ, երբ նա կը համապատասխանէ նորա բարոյական և իրական պիտոյքներին և նորա, ինչպէս ասացինք, ներքին համոզմունքներին։ Օանազան ազգեր ածումեն, զարգանումեն և կրթվումեն զանազան պայմանների ազգեցութեանց մէջ։ Ա երջիններն ծնուցանումեն և զարգացնումեն մարդկանց մէջ այս կամ այն զգացմունքներ, ձգտողութիւններ, և պիտոյքներ, այս կամ այն բնաւորութիւններ։ Դորա համար զանազան ազգութիւններ հնարում են զանազան հնարներ և ձեւեր լցուցանելու այն պիտոյքները, ինքն ըստ ինքեան ընդունելի է, որ այդ հնարները և ձեւերը լինում են այնքան ինքնաձեւ, որոշելի, որքան ինքնաձեւ և որոշելի լինում են այն պիտոյքները, որոնց նոքա ծառայում են նմանապէս զանազան վերջինները լրացնելոյ հնարները, որոնցից քաղաքական և բարոյական կեանքին յարաբերողներն են օրինագիտութիւնները, սոքա դարձեալ պիտի լինին ինքնաձեւ և զանազան։ Վերեֆն մի այլ ազգի կանոնադրութիւն, թէ նրան ստիպմամբ մտցնեն ուրիշ ազգի մէջ, որոնք (այդ երկու ազգերն) ունեցել են զանազան պատմական կեանք, չէ կարող երբեք ծառայել իւր նպատակին։ Եզրացին անհատական կեանքի տրամաբանութիւնը այնքան գօրեղէ, այնքան մարմնացած է լինում ազգայնութեան մէջ, որ ոչ մի բռնութիւն իրողապէս չէ կարող ջնջել նրան, և հարկադրել ազգին ունենալ ուրիշ աւանդութիւն, ուրիշ զգացողութիւններ են։

Դշմարիա է, որ մի ազգ ժամանակաւոր՝ կասես թէ մառանումէ իր պատմականական աւանդութիւններն, բայց դոցա արմատն յաւիտենական է և անջնջելի։ Այդ պատճառաւ, եթէ, ինչպէս պատմութիւնը մեզ ցոյց է տալիս, անձանօթ և օտարոտի փոփոխութիւններ մանումեն մէկ ազգի մէջ, նորա կեանքը լինումէ կարծ մինչ առաջի հանդէպը, երբ հասկացվումէ փոփոխութեանց անպիտանութիւնը։

Բայց միւս կողմից, հարկաւոր է նկատել, որ մարդկութեան կեանքի մէջ կան ընդհանուր գիծեր, գիծեր, եթէ կարելի է այդպէս ասել, համաշխարհական։ Այս տեղից մարդկութեան սեոր ունէ միակերպ, ընդհանուր պիտոյքներ, և նոցա լցուցանելու համար միակերպ ձեւեր և հնարներ։ Մարդկութեան փիլիսոփայական համարի արժանաւորութիւնն զիսաւորապէս այն է, որ նա ըմանումէ այդ ընդհանուր, համաշխարհական մարդկային ձգտողութիւնները, պիտոյքները, և ըստեղծումէ հնարներ նոցա լցուցանելու համար։ Այդպիսի ընդհանուր ձեւերը, հնարները առանց արգելքի ընդունվում են ուրիշ ազգերում։ Հռովմայեցւոց կանոնադրութեանց արժանաւորութիւնը իսկ այն է, որ նոքա լիակատար պատասխանում են վերոզրեալ մարդկութեան ընդհանուր ձգտողութիւններին և պիտոյքներին։ Եթէ այդ յատկութիւնը հռովմ չունենայր, երբէք նորա յիշատակը չէր լինի այնպէս կենդանի մինչեւ ցացսօր և այդպէս մնալու է յաւիտեան։ Եորա իշխանութիւնը, պետութիւնը տարածուեցաւ ոչ սուրի և հուրի միջնորդութեամբ, այլի ձեռն այն վերոյիշեալ բարոյական և մը-

տաւորական գերազանցութեանց միւս աղգերի դէմ, որք այնպէս յատկացը ին Նըռովմէականութիւնը։ Վամեն մէկ կեանքի հարց, ամեն մի քայլ քաղաքացւոյ գտանում է պատասխան նոցա կանոնաց և սահմանադրութեանց մէջ այնքան լիակատար, որքան այն ժամանակը մարդկային հանձարը ընդունակ էր մտածել և սաեղծել։ Այդ գերազանցութիւնն է պատճառ, որ Նոռվմ միջոց սահցաւ երապատիկ օրէնքներ գրել ամբողջ աշխարհի համար, որ ընդունում էր նորանից նորամտածողութեան պտուղները։ Այժմեան ժամանակս գործող քաղաքական սահմանադրութիւններն (Institute, institutiones) — (հասկանալով այս բանս ընդարձակ պարունակութեամբ,) ոչ այլ ինչ են, եթէ ոչ Նոռվմայեցւոց սահմանադրութիւններ, կամ յարմարացրած այժմեան կեանքին կամ ընդունած ամբողջապէս։ Փաստաւոր ապացոյցներ այս եզրակացութեանը չեմք բերում՝ յուսալով որ ընթերցողներին նորա քաջ յայտնի են։ Մտարերենք ընթերցողներին միայն մի բան, որ Նոռվմայեցւոց կանոնադրութիւնները և սահմանադրութիւնները և իշխանութիւնը լինում էին կարծատե այն երկիրներում, որոնց ազգային զգացումն էր այնքան հիմնաւոր, որ կարող էր պատերազմելնոցա փոփոխութեանց հետ և շարունակ այդպիսի պատերազմներից հեռացնել նոցա աղդեցութիւնը։ Օրինակ Ռուսանիա։

Այդպիսի կերպիւ քաղաքական կրթութիւնը ծնուցանում է աղջի մէջ բարոյական զգացմունքներ, մտաւորական զարգացումն և իրողական զօրութիւն։ Կայ ինք այժմեան դարին և կտեսնենք մի և

նոյն յայանութիւնն, ինչ որ ներկայացրուց մեզ Նոռվմէական կայսերութիւնը Երկրորդ հետեանք մի և նոյն քաղաքական կրթութանն, որ գոյանումէ, ինչպէս ասացինք, օրէնսդիտական կրթութիւնից է ամեն մի անհատին բարոյապէս կրթելն, այսինքն այդ երկրորդ դիպուածքըն՝ այդ կրթութեան ըթանը աւելի նեղ է, նորա աղդեցութիւնը սահմանափակվումէ մի առ մի անհատների վերայ։ Այս կողմից օրէնսդիտութեան կրթութիւնը ունի անշափելի բարի հետեանքներ։ Պերծինները լինում են երկու կարգի, առաջին — անհատական, երկրորդ — հասարակական։

Ինչպէս ասացինք մեր գործի հետեանքը յատկացնում է իսկ գործի որպիսութիւնը։ Նետեանքները գործողի համար դընում են քաղաքական օրէնքներն։ Պերծիններն քարողում են քաղաքացւոյն թէ այս ինչ գործ քեզ, գործողի համար ունէ այս ինչ հետեանք, բարի, կամ վատ։ Այդպէս արտաքին, քաղաքական ձեւերով գնահատվում են բարոյական կամ պատուիրանազանցական գործի որպիսութիւնները։ Այն գործերն, որոնք ունեն բարի հետեանքներ՝ ըստ մեր համոզմունքների են բարի գործեր, որովհետեւ մարդկային հայեացքը կամ համոզմունքը կազմվում են այս կամ այն հանգամանքների, յայտնութիւնների աղդեցութեանց տակ։ Այսպիսի կերպիւ բաւական է լինում, եթէ մարդս ստանում է համոզմունք թէ կրթութիւնով, թէ դաստիարակութիւնով, թէ փորձառութիւնով, կամ թէ հետաքրքիր լինելով իմանալ, սովորել, լսել ու ըիշներին, որ այս ինչ գործը

քրիստոնէական ուսումն, մեր բարոյական զգացմունքներն և քաղաքական օրէնքներըն համարում են վատ, չար, որ մարդիկ զսպեն իրանց այդ գործը բռնելուց։ Այդ կանոնին հետևելով մարդիկ ժամանակով կազմում են մի որոշեալ բարոյական համազմունք և կանոնաւորում են իրանց գործերն։ Այդպիսի կերպիւ հասարակութիւնը օգնութիւն ստանալով սկզբնական դաստիարակութիւնից կրթվում է քաղաքական ուղղղ ձանապարհներով, այսպէս ասել, իրաւաբանական կերպիւ։ Այսպէս այն հասարակութեանցը, ուր տեղ այդպիսի հասարակական կրթութիւնը է նորա գլխաւոր նպատակն, կամ թէ այն մասին հասարակութեան, որն վերոգրեալ կերպիւ կրթուած է։ Առցա մէջ անկանոն, պատուիրանազանց գործեր պատահում են շատ քիչ, և թէ պատահում են, նոցա պատճառն լինում է հանգամանքների անհաշտելի բարոյական կամ ֆիզիքական բերմունքները, որոնց դէմ մարդկային ոյժը իւր թոյլութեան պատճառաւ չէ կարողանում պատերազմել։ Այս է դիտառուորութիւն մարդկային սեռի, որ նա այս կամ այն ձևերով ժամանակին յարմար աշխատում է, ըստ իւրում հասկացողութեան տարածել երկրի վերայ ուսումն և լուսաւորութիւն, իմանալով բառերիս նշանակութիւնը, դիմաւորապէս իրրե բարոյական կրթութիւն։

Վարդկութիւնը հասկացել է արդէն, որ բարոյական կրթութիւնը, և զգացմունքները, որքան որ խորին արմատ չը ձգեն մարդի հոգւոյ և խղճմտանքի մէջ, նոցա կոյս և մաքուր պահպանելու համար մարդը հարկաւորութիւն ունէ մէկ որո-

շեալ պաշտօնի, վերջինն է իրողական, նիւթական բաւականութիւն։

Պարզենք այս միտքը, թէպէտ նա ինքն ըստ ինքեան հասկանալի է։ Երեւակայացնենք մեզ մի բարոյական համոզմունքի տէր ոմն, որ չունէ ոչ հաց ուտելու, ոչ կացարան ապրելու և ոչ մի ապրուստի միջոց։ Այս իւր անհրաժեշտ ֆիզիքական սիտոյքը լրացնելու կանոնաւոր և բարոյական ձանապարհներ և միջոցներ չեն գտնում։ բնութիւնը ամեն մի վայրկեան իւր անողորմ պահանջողութիւնը յայտնում է։ Այնում է հնար որ և իցէ կերպիւ այն մարդուն, լսելով իւր խղճի և համոզմունքների հրամանին, և պատերազմել բնութեան պահանջողութեանց հետ։ Յանդիմանութիւնը տեսում է քանի մի ժամանակ։ Վարդը չէ հերոս, և հասարակութիւնը, որին նա անդամ է, չէ հնարել ոչ մի միջոց, որ այդպիսի խեղճն իւր արհեստագիտութեամբ, կամ ուրիշ ընդունակութեամբ իւրեան հաց ձարէ։ Աւրեմն մարդոյն մնում է գործ գնել այդ նպատակի համար այնպիսի հնարներ, որոնք վիրաւորեցնում են մարդկային բարոյակ մն և ազնիւ զգացմունքները, խանգարում են օրէնքը և ուրիշի իրաւունքը, այսինքն նա գործ է զնում խարեբայութիւն, գողութեան զանազան ձևեր, հնարում է սուտ ապահովական պարտաթրղթեր են։ Այսպիսի կերպիւ բարոյական ազնիւ մարդը մէկ վայրկենում ընկնում է սատանայի զիրկը, և նորա մարմինը փթում է բանտում և հոգին անվախճան տանջվում է, ջնջելով իրան հետ նոցա ևս, որոնց վիճակը նորանից կախումըն ունէր։

Եյտիսի օրինակներ, կեանքից վեր առած՝ ընթերցող կարող է իւրեան ներկայացնէ անթիւները, և ըստ մեծի մասին սցդ յայտնութեանց պատճառը լինում է մեկ ընդհանուր բան, այսինքն պատերազմ, ստիպողականութիւն պահանջողութեանց և հնարաց: Աւրեմն բարյական մարդկանց համար չքաւորութիւն դիեսաւորապէս լինում է պատճառ պատուիրանազանցութեանց և անբարյական գործերի: Ճըշմարիտ է՝ մարդիկ գործում են ուրիշ տեսակ պատուիրանազանցութիւններ, որոնք ոչինչ յարակցութիւն չունին չքաւորութեան հետ, օրինակ մարդասպանութիւն առանց յափշտակութեան նպատակի, պատուիրանազանցութիւնք մարդոյ անձնի, պատուի, առողջութեան և աղտառութեան գեմ ելն, որոնք ունենում են ուրիշ սկզբնական պատճառներ: Բայց գոյցա մասին, որոնց թիւը լինում է համեմատարար քիչ, և նոքա մեր հարցի համար նշանակութիւն չունենալու պատճառու չեն լինի քննութեանս պարունակութիւն:

Աւրեմն սահմանափակելով գրածիս պարունակութիւնը միայն այնպիսի անբարյական գործերով, որոնց սկզբնական պատճառներն լինում են չքաւորութիւն և բացակայութիւն բարյական և քաղաքական կրթութեան, մենք պիտի դարձնենք ընթերցողի ուշադրութիւնը չքաւորութեանց վերայ, որովհետեւ աղքատութեան, չքաւորութեան բնութիւնը լինումէ զանազան երբ սեպհականութիւն ստանում է զօրութիւնը վճռել մարդոյ քաղաքական վիճակին: Յայտնի բան է, որ ունեցողը լուժական կայք թէ գումարով

կամ թէ թանկագին արժողութիւնով հարիւր հաղար ուուրի՝ պիտի հաշուի հարուստ մարդ: Բայց մի և նոյն ժամանակ այդ գումարը չէ կարող անուանուել բաւականութիւն, հարստութիւն, երբ մենք խօսում ենք հարստութեան մասին նայելով նորա վերայ արհեստական, քաղաքական տնօրէնութեան հայեացքով, երբ խօսում ենք հասարակութեան դրութեանցը յարմար, երբ հարստութիւնը լինում է չափ (պեհզ, տէսր, ) քաղաքական իրաւանց, երբ հարստութիւնն հասկացվում է իրբեւ հիմն ազատութեան, լրւսաւորութեան և բարյականութեան մեր ժառանգներին, և երբ ընդունում ենք հարստութիւնը իրբեւ ազգային զօրութեան հիմն, միջոց ազգային բարյականութեան: Եյդպիսի նշանակութիւն ստանում է այնպիսի հարստութիւն, երբ նա բաղկանում է անշարժ կալուածքների սեպհականութիւնից: Կարձեալ պիտի կրկնենք այս տեղեւս, որ աէօթէտիկական ապացոյց այժմս պահանջել մեզանից կլինէր անտեղի, որովհետեւ նա անչափ կը հեռացնէր մեզ մեր հարցից: Բայց հարկաւոր կլինի բերել այս տեղ քանի մի վաստական ապացոյցներ: Ծներթենք պատմութիւնը, նայենք այն օգուտներին, որոնք քաղեցին զանազան ազգեր իրանց յաղթութիւններից: Կայենք այդ կողմից Հռովմայեցոց և Եսիական ազգերի վերայ: Հռովմայեցիք խոնարհեցնելով իւրեանց հպատակութեանները որ և իցէ ազգին, նախ և յառաջ լինում էին սեպհականատէր այն ազգի հողին, այսինքն անշարժ կալուածքին, և գորանից հետ նա սկսում էր մշտցնել նորա մեջիւր քաղաքականութիւնը,

իւր սահմանադրութիւնները, իւր օրէնքները Այս նպատակներով նշանակվում էին կառավարիչ նախարարներ (магистраты, консулы, диктаторы). կնշանակէ, չոռվմ նախ և յառաջ յափշտակում էր այլազգիների ձեռից այնպիսի բան, որ նոցա ծառայում էր իրեւ ծնօղ և աղքիւր ամեն միջոցի, թէ զօրութեան, թէ հարատութեան, և լ. յետոյ նորա համար շատ զիւրին էր լինում, իրեւ տանը տէր մացնել նոցա մէջ այն փոփսիութիւնները, որոնց մտցնելը նա համարում էր նպատակաւոր: Այս է պատճառը, որ չռովմայեցոց տիրապետութիւնը միշտ լինում էր աղդու, զօրեղ, հիմնաւոր և երկարատեւ:

Հակառակ դորա վարվում էին Ասիական ազգերը: Կոցա գլխաւոր գործն լինում էր՝ զինի զանազան բարբարոսական վարմունքների յաղթուած ազգերի հետ՝ այն, որ նոքա բաւականանում էին միայն պահանջելով յաղթուածներից դրամական հարկ, թողլով նոցա տէրութեան անշարժ կալուածքները, անփոփոխ թողնելով նոցա կանոնները, սահմանադրութիւնները, միով բանիւ, չխանգարելով ամենեին յաղթուածների անկախութիւնը: Յայտնի բան է, որ վերջիններն պտտրաստուելով օր ըստ օրէ վճնտելու անհրաւեր հիւրին, և շատ հեշտիւ հասնում էին իրանց նպատակին: Այդ պատճառաւ Ասիական յաղթող ազգերը ունենում էին յաղթուածների հետ միայն արտաքին յարաբերութիւն և չին ձեռք բերում ոչ մի միջոց և պայման տիրապետութեան, և իսկ այդ պատճառաւ նոցա յաղթութեանց հետևանքը լինում էին անպտղաբեր, կարճատեւ:

Գարձեալ փաստ: Խնչպէս այժմ նմանապէս անցեալ գարերում միայն ազգերն ունենում էին պատմականական գոյութիւն, որոնք իրանց իրողական և բարոյական գորութիւնը ձանաչել են հողը, բնութիւնը:

Մշակը, զիւղացին, որ ունէ մէկ կտոր հող իւր սեփականութեան ներքոյ, մշակելով այն հողը, աներկիւղ յոյս ունէ վաղսւան հացի համար: «Եա աղատ է այն ժամանակը առաջի ստրկութեան ծառայութիւնից. նորա դառն քրտինքը, որ թափում է խեղձը հողը վարելով և ցանելով, կերակրում են նորան և նորա գերդաստանին: «Եա չէ ստիպուած փոխելիւր աղգայնութիւնը, հաւատը, և աւանդութիւնները պատառ հաց ձարելոյ համար:»

Ուրեմն հաստատուն քաղաքականութիւնը պահանջում է բացի վերոգրեալ քաղաքական օրէնսդիրական կրթութիւնը և սեփականութիւն անշարժ կալուածքի վերայ հիմնուած. այդ երկու պահանջողութիւններն չեն պատահական, այլ նոքա ունեն իմաստ: Տնտեսութիւնը է հիմն ամենայն քաղաքական յայտնութիւնների: «Կորա հարցերը վճռելու ցանկութիւնը հարկագրում է մարդոյն հնարելայս կամ այն ձևեր. կանոններ նոցա վը ուելու համար: Ամէն մի անհատ (ոլուօդլութ.) ունէ որ և իցէ իրաւունք: Այդ իրաւունքները իրեւ արտաքին նշան մարդկային ձգտողութիւնների հանդիպում են միմեանց, իւրեանց սահմաններից դուրս են գալիս և մտանում են ուրիշի իրաւունքի սահմանը. այս տեղից ծագում է իրաւանց խանգարումն, և այս տեղից հարկաւոր է լինում կանոնաւորել իրաւանց

հարկաւորութիւնը: Այն հնարք, ձեզ,  
որ մարդիք ընդունում են կանոնաւորելու  
իւրեանց յարաբերութիւնները, անուա-  
նում ենք (օքէն+): Աւրեմն կայ տրամարա-  
նական կապ օրէնսգիտութեան և քաղա-  
քական անտեսութեան մէջ: Աւղիղ հաս-  
կացողութիւնը երկրորդի ուղիղ պարզում  
է առաջինի հարկաւորութիւնը, և պա-  
րունակութիւնը: Այսպիսի կերպիւ քա-  
ղաքականութիւնը պահանջելով կրթու-  
թիւն, միւնոյն ժամանակ պահանջում է  
տնտեսականութիւն:

(այսու շաբաթնակի՞ն)

**ԱԷՆՀԵԿՇԵՐԻ ԱՐԵՐԱՑ**

ԽԱՆԳԵՐՄՈՒՆՔ ՀԲՅԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՀՆՈՒՄՆ ԵՒ Ի ՆՈՐՈՒՄՄ\*):

Դ Ի Ե Ա Ծ Գ Ա Բ Բ Ր Ի Է Լ Ե Պ Ո Վ Պ Ո Ս Ա Ե Վ Ա Զ Ե Ա Կ Ա Ն

Աշաւասիկ դարեր են անցել այն ցաւալի ժա-  
մանակի վերայ, երբ մեր ազգը կորցնելով իր քա-  
ղաքական միութիւնը, իր թագաւորական թագն  
ու գաւազանը, ընկծելէ իր պարանոցը օտար աղ-  
քերի լծի տակ: Թողնենք այն պատահական թրշ-  
ուառութիւնները, որոնք սրբնթաց կայծակի նը-  
ման համար դաշտում են խեղճ ձայի սիրտը,  
նա բաց ի այն հարկադրուած էր շատ տարբեր  
քաղաքական և տնտեսական պայմանների առաջ-  
նորդութեամբ ապրիլ ու կառավարուիլ: Նորա  
նուիրական երկիրն արդէն մաս մաս էր բաժա-  
նուած: Նորա ապրուստի եղանակը բոլորովին փո-  
փոխուել էր: Նորա միակ գործն էր մաքառել կեան-  
քի վտանգների դէմ և որոնել իր ապահովու-  
թեան բունը: Բնական է որ այսպիսի՝ կեանքից

հետզետէ ազգային միութեան կապը թուլանում  
էր, մեր ազգը միւս հին ազգերի նման արդէն ան-  
դառնալի կորստեան գուռն էր հասել, եթէ չ'էին  
եղել մեր այլէնի լուսաւ ու լրաց: Այն մայրենի Ե-  
կեղեցին մեր տառապեալ ազգի մի միակ անառիկ  
և անթափանցիկ պատսպարանն էր այս գարեւոր  
ժամանակների մէջ: Մեր մայրենի լեզուն մի միակ  
ընդհանուր շլթան էր, որ կապում միացնում էր  
միւս ցարդ մեր Թուրքիաբնակ, Թուփիաբնակ և  
այլ Հայերը միմեանց հետ իրրե ազգ: Այդ երկու  
պահապան հրեշտակները՝ կրօնն ու լեզուն՝ մի-  
մեանց աջակցութեամբ պահպանել են և պահպա-  
նում են մեր ազգութիւնը, և եթէ Հայն իրրե ազգ:  
մարդկութեան հորիզոնի վրայ մի նուազ շունչ է  
առնում, այդ մեր մայրենի լեզուի և կրօնի փրկա-  
րար ընորհն է: Արանցից մէկն (Եկեղեցին) աշա-  
ւասիկ Նւետարանական անխախտելի հիմն վերաց  
արդէն ամրացած կեցած է մեր բաղդի պատահա-  
րաց դէմ, իսկ միւսը (լեզուն) դորա անառիկ և  
ապահով ծոցում հետզետէ մշակուելով՝ ծա-  
ծանում է աշաւասիկ մեր Հայութեան զիսին իր-  
րե այժմու միութեան զրօշակ: Որքան փափա-  
գելի է ուրեմն, եթէ այս մշակութիւնը մեր այժ-  
մեան ուսումնականների եռանգործ աշխատափրու-  
թեամբ և մանաւանդ լեզուի անաչառ և ճիշդ  
քննազատութեամբ շնորհէր մեզ ցրուեալ Հայերիս  
համար մի քանի արդեան բարբառների միջից մի  
ընդհանուր զրականական զիւրընտել բարբառ և  
աւելի ամրապնդէր մեր միութեան նուիրական կա-  
պը:

Մեր լեզուն, մեր մայրենի դարաքաշ լեզուն,  
ինչպէս և նորա տէր ազգը իր պատմական կեան-  
քի մէջ շատ և շատ ցաւալի վիճակների մէջ է  
եղել: Այդ լեզուն՝ կարելի է ասել, ամեն լեզու-  
ների տարրերն ել փորձել է: Մեր բնիկ մայրենի  
լեզուն զեռ չկազդուրուած և ինքնուրօյն անկախ  
ու սեփհական կերպարանք չ'առած մինչև Ե-րդ  
դարն և այնուհետև կարող էր զրացի և եկաւոր  
լեզուների ազգեցութեանն ենթարկուիլ: Նա փո-  
խանակ իր իսկական պարզութիւնը պահպանելու  
գուցէ ընդունումէր օտար լեզուների ոճերը, դար-  
ձուածները, շատ անգամ և առողանութիւնը:  
Ուրեմն ի՞նչքան կարևոր և միանգամցն գովելի

(\*) Տպեալ ի տպարանի Խալիպեան ուսումնա-  
րանի. ի թէղոսիա. 1869, ԽՀՁԹ: